

8-ՐԴ ԴԱՐԻ ԾԱՐԱԿԱՆԱԳԻՐՆԵՐԸ

ՀՈՎՀԱՆ ՕԶՆԵՑԻ

Ութերորդ դարում եղել են չորս նշանավոր շարականագիր՝ Հովհան Օձնեցի կաթողիկոսը, Ստեփանոս Սյունեցին, սրա կրտսեր քույրը՝ Սահակդուխտ կույսը, և Վահան Գողթնացու քույրը՝ Խոսրովիդուխտը:

Առաջին անգամ մեր մատենագրության մեջ հանդիպում ենք կին բանաստեղծների, որոնք շարականներ են գրել: Որքան մեզ հայտնի է, այս դարում, քրիստոնեական աշխարհում, այս երկու հայ կույսերն են, որ առաջին անգամ շարական են գրել: Սահակդուխտը ոչ միայն շարականներ է գրել, այլև դրանք իրենց եղանակներով Գառնիի ձորում, իր մենաստանում, սովորեցրել է աղջիկներին ու տղաներին: Կրոնական բանաստեղծության մեջ սա եզակի երևույթ էր՝ այն էլ 8-րդ դարում:

Հովհաննես Խմաստասեր Օձնեցին և Ստեփանոս Սյունեցին ժամանակակիցներ են: Նրանք ոչ միայն նշանավոր շարականագիրներ են, այլև հայ եկեղեցու ակադավոր գործիչներ և հայ դավանության ուժեղ գաղափարախոսներ:

Օձնեցին Տաշրաց գավառի Օձուն գյուղից էր: Սովորել է Թեոդորոս Քոթեմավոր վարդապետի մոտ, ունեցել է ճարտասանական և բանաստեղծական մեծ ձիրք, հմուտ է եղել նաև փիլիսոփայական գիտությունների մեջ, որով և վաստակել է «Խմաստասեր» մականունը: Իր հայրապետության երկրորդ տարում նա հրավիրեց

Դվինի հայտնի ժողովը, 719 թվին, որտեղ քննարկվեց հայ եկեղեցու բարեկարգության խնդիրը: Այստեղ էլ նա արտասանեց իր պատմական Ատենախոսությունը: «Երևութականներին» խիստ քննադատեց, միաժամանակ պայքարեց նաև պավլիկյանների դեմ: Օձնեցին մի կողմից բարեկարգել է հայ եկեղեցին, իսկ մյուս կողմից՝ պայքարել ժամանակի աղանդավորների և եկեղեցական կարգը խանգարողների դեմ: Նա Գրել է նաև հետևյալ շարականները.

1. Կանոն Դաթի մարգարեին և Յակոբայ առաքելոյն.

2. Կանոն Ստեփանոսի Նախավկային.

3. Կանոն Պետրոսի և Պողոսի գլխաւոր առաքելոցն.

4. Կանոն Որդւոցն Որոտման:

1936 թվականին Երուսաղեմում լույս տեսած Ծարակնոցի «Յօրինողք շարականաց» առաջաբանում Հովհան Օձնեցուն վերագրվում են «Զմեղաք յամենայնի և զկարգ մեծ տօնիցն»: Ծարակնոցի հաղորդածն ան-

¹ Հովհան Խմաստասեր կաթողիկոսի երկերն են՝ «Ատենաբանութիւն», «Կանոնք», «Հնդդեմ պապիկեանց», «Հնդդեմ երևութականաց», «Յաղագս կարաց եկեղեցւոյ», «Վասն մեծի աւուր միաշաբաթին», «Սակս գիշերաղին ժամու» և այլն: Վենետիկում 1838 թվականին հրատարակվել է նրա երկերի վերաբերյալ մի գիրք՝ «Յովհաննու Խմաստասերի Օձնեցւոյ մատենագրութիւնք» վերնագրով:

հավանական է, քանի որ նույն Ծարակ-
նոցի վերջում, «Ցանկ շարականաց ու-
նից սրբոց» մասում, հիսունի հասնող
մեծ ու փոքր կանոններ կան, որոնց
բովանդակած շարականների թիվը հաս-
նում է հարյուրների՝ տարբեր ոճով ու
արվեստով գրված: Այստեղ մտնում են շա-
րականների ութ տեսակը՝ տարբեր ծավա-
լով ու ձայնով: Անկարելի է, որ հարյուր-
ների հասնող այդ բազմաթիվ շարական-
ները միայն մի հեղինակի գործ լինեն: Հիմ-
նը վերջում Ծարակնոցի, շարականագետների,
պատմիչների² հաղորդածների, մյուս ձեռա-
գրերի և այլ տվյալների, ինչպես նաև շա-
րականների ոճական առանձնահատկու-
թյունների վրա, հավանաբար, Հովհան Ծա-
նեցուն պատկանում են վերևում հիշված 4
կանոնների շարականները: Քննենք դրանք
առանձին-առանձին:

Դավիթ մարգարեի և Հակոբ առաքյալի
կանոնն ընդգրկում է հինգ շարական՝ օրհ-
նություն՝ դձայն («Յաղթող գտա»), Հար-
ցը («Մեղաք յամենայնի»), Ողորմեան
(«Անսկիզբն Աստուած»), Տեր յերկնիցը
(«Երդուա Տեր») և Մանկունքը («Օրհնե-
ցէք զՏեր»): Օրհնության մեջ շարականագի-
րը նկարագրում է, թե ինչպես «Երանելին
Դավիթ զօրացաւ ի վերայ այլագոյն և հա-
ւատով պարտեաց զանօրէնն զԳողիար»:
Իսկ օրհնության մնացած երկու փոքրիկ
տները նվիրված են Հակոբ առաքյալին:

«Ուսարուք զարդարութիւն բնակիչք երկրի,
Նայեցարուք ընդ արդարն Յակոբ.
Որ հաճոյ եղև Աստուծոյ վարուքն
իրովք»...³

Թե ինչու շարականագիրը Դավիթ
մարգարեին և Հակոբ առաքյալին մի շա-
րականի մեջ միասին է վերցրել, հայտնի է
բառնում օրհնության վերջին տնից:

«Սա եղև գլուխ առաքելոց սրբոց.
Եւ կոչեցաւ եղբայր Տեառն ի տանէ Դավիթ»⁴:

Նոր Կտակարանում և առաքելական
թղթերում Հակոբ կամ Հակոբոս առաքյալը
հաճախ է կոչվում «Տեառնեղբայր»: Բացի
այդ, Քրիստոսը համարվում է Դավիթ մար-

գարեի շառավիղը՝ «Որդի Դավթի», «Ծագե-
ցաւ եղջիր ի տանէ Դավթի» դարձվածնե-
րին հաճախ ենք հանդիպում շարականնե-
րում:

«Մեղաք յամենայնի» Հարցը ապաշխա-
րական բնույթի «Ողորմեա»-ների է նման,
քան թե Հարցի: Ծարականի հեղինակը դի-
մում է Դավթին և Հակոբին «առ Աստուած»
բարեխոսելու, որ ներվեն մարդկանց մեղ-
քերը:

«Մեղաք յամենայնի և զպատուիրանս քո ոչ
պահեցաք,
Այլ խոստովանիմք առ քեզ, մի անտես
առնեն, այլ գթա ի մեզ»:

Ապա Գործատան մեջ ցույց է տալիս, թե
Արարիչը որքան բարձր է դասել Դավթին
և Հակոբ առաքյալին:

«Որ ընտրեաց զերանելի զԴավիթ
Յառաջնորդութիւն Իսրայէլի...
Որ կացոյց զսքանչելին Յակոբ
Պարիսպ շրջապատ եկեղեցոյ իւրոյ»⁵:

«Ողորմեա» շարականի մեջ փառաբան-
վում է «Անսկիզբն Աստուած», որ աշխար-
հին լույս ու «փրկութիւն է ծագել ի տանէ
Դավթի», որ անմարմին հավիտենական
թագավորն իջել է երկնքից երկիր, մարմ-
նացել և մարդկության փրկության համար
խաչ բարձրացել: Մարգարեների գուշակու-
թյան համաձայն, Դավիթը «Աստուածու-
հայր կոչեցաւ»: Եւ այդպես մնացած շարա-
կանների մեջ էլ (Տեր յերկնից և Ման-
կունք) մի քանի տեղ փառաբանվում, դր-
վատվում են Դավիթ մարգարեն և Հակոբ
առաքյալը, որպես երկնի ընտրյալներ,
մարդկանց բարեկամներ. առաջինը որպես
«Աստուածահայր», իսկ երկրորդը՝ «Տեառն-
եղբայր»: Այս կանոնի վերջին շարականը
ավարտվում է այսպես:

«Գաւազան ծաղկեալ յարմատոյն Յեսսեայ՝
Դավիթ մարգարէն.

Եւ ի նորին շառաւիղէ՝ առաքեալն
Յակոբոս.

Ականատես և սպասաւոր Բանին
Աստուծոյ»:

Ստեփանոս Նախավկային նվիրված կա-
նոնն ունի վեց շարական (Օրհնություն,
Հարց, Ողորմեա, Տեր յերկնից, Մանկունք,
Մաշտո):

Կանոնի շարականների հիմնական միտ-
քըն այն է, թե ինչպես Ստեփանոս սար-

² ա—Կ. Գանձակեցի, էջ 94:

բ—Հ. Գ. Ավետիքյան, Բացատր. շարակն., էջ
870:

գ—Դ. Խաչկունց, Հայոց կրոնական բանաստեղ-
ծությունը, Թիֆլիս, 1904 թ., էջ 48:

դ—Ե. Ծառագիզ, «Էջմիածին», 1948 թ., էջ 67—
70:

³ Ծարակնոց, Երուսաղեմ, 1936 թ., էջ 111—112:

⁴ Անդ, էջ 112:

⁵ Անդ, էջ 118:

կալվազը Քրիստոսի վարդապետության համար քարկոծվել, նահատակվել է և հանդիսացել եկեղեցու առաջին և մեծ վկան:

«Օրհնություն» մեջ Ստեփանոսը համարվում է «Նահատակ քարի», որը երկնավոր թագավորի կողմից պարգևատրվել է անթառամ պսակով, նրա համար, որ մկրտվել է: Նահատակության իր սուրբ արյունով և դարձել «առաջին վկայ Քրիստոսի»: Այդ շարականի մեջ տրվում է նաև Ստեփանոսի կերպարը որպես քաջ վկա, որը մարտնչել է թշնամու դեմ և իր արյամբ գնել երկնային արքայությունը: Նա հանձն է առնում քարկոծումը և միաժամանակ մեծահոգաբար Արարչից թողություն ու ներումն խնդրել իրեն քարկոծողների համար: Ըստ շարականի, Ստեփանոսը մարդկության համար դարձել է քարերար: Ահա թե շարականագիրը ինչպես է բնորոշել Նախավկայի նահատակության հոգևոր արժեքը:

«Աստուածաստեղծ մարդոյն պտուղ
ընծայեցար,
Մերձ լանմերձեանայի լոյսն.
Եւ հայրենի աւանդութեանն եղեր
ծառանգորդ.
Ծանապարհ վկայից յետ Քրիստոսի գտար,
Եւ աստուածային փառացն արժանատր
եղեր»...⁶

Ապա կանոնի տարբեր շարականներում Ստեփանոսը բնութագրվում է որպես «մարտիրոսապսակ», «տունկ անմահ», «մեծապայծառ», «հրեշտակակերպ», «երջանիկ ճառագայթ», «առաջին մարտիրոս» և այլն: Առանձնապես իր քնարականությամբ աչքի է ընկնում կանոնի «Ողորմեա» շարականը: Այստեղ բազմաթիվ խնդրվածքներ կան երկնքից, որոնց կատարման համար շարականագիրը դիմում է Ստեփանոս Նախավկայի միջնորդությանն ու բարեխոսությանը:

«Առաքեա ի մեզ Տէր գրագում գթութեան
քո զողորմութիւն,
Բարեխոսութեամբ սրբոյ Նախավկային քո
և ողորմեա...

Որում գերկնայինն քացեր գոյուն,
ցուցանելով զանճառելի խորհուրդ,
Սորին աղաչանօք խնայեա ի մեզ Տէր և
Ողորմեա»...⁷

Իսկ կանոնը փակվում է Նախավկային ողղված հետևյալ խնդրանքով:

«Աստուածային զինու վառեցար սուրբ
Հոգւոյն,
Տեսանելով յերկնս հայրենի փառօք,
Զորդին Աստուծոյ, ով սուրբ Ստեփանոս.
Մեծ և պատուական անուանդ ի վկայս.
Աղաչեա զԱստուած շնորհել մեզ զկեանս
անվախճան»⁸:

Պետրոս և Պողոս առաքյալների կանոնն ունի վեց շարական. «Ցնծայ այսօր եկեղեցի» օրհնությունը, «Որ խոստացար տալ» Հարցը, «Ամուլք հաւատոյ» Ողորմեան, «Երանելի սուրբ առաքեալքն» Տէր յերկնիցը, «Որ արփիահրաշ» ստեղի Մանկունքը և «Որ անպարագիրն է» ստեղի Համբարձին:

Օրհնության մեջ ցնծության զգացումն է հորդում, որովհետև առաքյալները, առանձնապես Պետրոսն ու Պողոսը, հանդիսացել են «Վեմ հաւատոյ» և իրենց «հողեղէն բնութեամբ գերազանցեալ» այդ արժանիքների համար էլ նրանք եկեղեցու կողմից փառաբանվում են: Այդ երկու առաքյալները, ըստ շարականի, եղել են համաշխարհային լուսավորիչներ, սրանք են անբաժնելի Քրիստոսի եկեղեցին և դարձի կոչել հեթանոսներին: Հարցի մեջ Պետրոսն այնքան է մեծարվում, որ Քրիստոսը խոստանում է նրան տալ երկնի արքայության բանալին, իսկ Պողոսը Ավետարանի հավատարիմ տարածողն ու քարոզողն է հանդիսանում: Այդ երկու առաքյալները Ողորմեա շարականի մեջ դիտվում են որպես

«Ամուլք հաւատոյ, այսօր փայլին, հա՛յր
սուրբ
Ի քո սուրբ եկեղեցւոյ»...⁹

Առանձնապես պատկերավոր մտածողությամբ է հորինված կանոնի Մանկունքը: Պետրոսն Ավետարանի ուղկանով մարդիկ է որսացել հեթանոս աշխարհից և դրանով դարձել հավատի անվեհեր զինվոր: Ոչ պակաս ջերմություն ունի կանոնի վերջին շարականը՝ ստեղի Համբարձին, որը նվիրված է Պողոս առաքյալին:

«Լոյսն, որ պայծառ քան զարեգակն,
Արտափայլեալ շուրջանակի սրբոյն
Պօղոսի»...¹⁰

«Որդւոցն Որոտման» կանոնն ունի 5 շարական՝ «Որ էն էութեան» Օրհնությունը,

⁸ Աճ, էջ 122:

⁹ Աճ, էջ 125:

¹⁰ Աճ, էջ 128:

⁶ Աճ, էջ 118:

⁷ Աճ, էջ 120:

«Որ զամենայնըն յոչընչէ արարեր» Հարցը,
«Որդիքն Որոտման» Ողորմեան, «Հոգի իմ
կանխէ առ քեզ Աստուած» Տէր յերկնիցը և
«Որ յանըստուեր ի լուսոյն» ստեղի Ման-
կունքը:

Որոտման Որդիք են կոչվում Հակոբ և
Հովհաննէս առաքյալները: Այս կանոնն էլ
նվիրված է երկու եղբայր առաքյալներին,
որոնք «տեսին քարոզք Բանին ճշմարտու-
թեան և ծանուցին տիեզերաց»: Այս կանոնի
շարականների մեջ աչքի են ընկնում դա-
վանաբանական կողմերը: Այսպէս օրինակ.

«Իսկապէս Բանն Աստուած միացաւ ի
մարմնի...
Որ անմարմին ի Հօրէ մարմնացար ի
կուսէն...

Որ զամենայնըն յոչընչէ արարեր...

Որ կոչեցեր զտիեզերս ի հաւատս
ճշմարիտս» (Ծարակն., էջ 122—131):

Կանոնի Տէր յերկնից շարականում դր-
սեվորվել են հեղինակի ներքին ապրումնե-

րը, որոնք նաև խնդրվածքներ են՝ ուղղված
Աստծուն՝ առաքյալների կապակցությամբ.

«Հոգի իմ կանխէ առ քեզ Աստուած,
Որ ծագեցեր լոյս... ընտրելովք ըզլոյս
հրամանի քո յաշխարհ, քո առաքելովք,
վասն սոցա կեցո զմեզ:
Լցեալ շնորհօք հոգւոյդ սրբոյ...

Տեղեկացեալ եղեն անճառ էութեան

Միածնի քո
վասն սոցա կեցո զմեզ» (Ծարակն., էջ
132):

Հովհան Օձնեցու շարականները հագեց-
ված են նաև քնարականությամբ, դրանց
մեջ նա արտահայտում է նաև իր անձնա-
կան տրամադրությունները՝ խոսքի գեղեցիկ
ձևերով ու այլաբանությամբ:

Օձնեցու շարականները մեր հոգևոր քա-
նաստեղծության գեղեցիկ և հոգեկից էջերն
են հանդիսանում, իրենց բովանդակությամբ
ու արվեստով:

